Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 6-ին աշխարհասփյուռ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան և Աստվածհայտնության հրաշափառ տոնը:

Նախորդ օրը, հունվարի 5-ին, հավարտ երեկոյան ժամերգության, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության ու բարեպաշտ հայորդիների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ճրագալույցի Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: Պատարագից հետո կատարվեց նախատոնակ, հավարտ որի Նորին Սրբությունն ավետեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդն ու Աստվածհայտնությունը: Արարողության ավարտից հետո Մայր Տաճարի շրջափակը ողողվեց հարյուրավոր մոմերի լույսերով, որ հավատացյալները տանում էին իրենց հետ՝ լուսավորելու սեփական հարկերը Տիրոջ Սուրբ Ծննդյան կենարար լույսով:

Հունվարի 6-ին մեծ էր տոնական խանդավառությունը համայն հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Միածնաէջ Մայր Տաճարում Հայրապետական Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Խաչերով ու խաչվառներով զարդարուն հայրապետական թափորը □Խորհուրդ խորին□ շարականի երգեցողությամբ և ամպհովանու ներքո Ամենայն Հայոց Հայրապետին առաջնորդեց դեպի Մայր Տաճար՝ Սուրբ Պատարագ մատուցելու և տոնի առիթով իր պատգամը հղելու համայն հայությանը (տե՛ս էջ 3):

Հավարտ Ս. Պատարագի Նորին Սրբությունը կատարեց Ջրօրհնեքի արարողություն՝ որպես Քրիստոսի Մկրտության խորհրդանիշ: Այս տարի Ջրօրհնեքի Խաչի կնքահայրն էր ճանաչված երգահան Տիգրան Մանսուրյանը:

Ս. Պատարագին և Ջրօրհնեքի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը, ՀՀ նախարարներ, պետական այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, գիտության ու մշակույթի գործիչներ:

Սրբազան Պատարագից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՋՐՕՐՀՆՅԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.
ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՋՐՕՐՀՆԵՔԻ ԽԱՉԸ ՀԱՆՁՆՈՒՄ Է
ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿՆՔԱՀԱՅՐ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԻՆ